



## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՄՀՍՀԿ) գործունեության մասին

Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնը (ՄՀՍՀԿ) համընդհանուր շահերով ոչ առևտրային ապաքաղաքական ընկերակցություն է՝ հիմնադրված 2011թ. դեկտեմբերի 29-ին Երևան քաղաքում: Կենտրոնը ստեղծվել է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

ՄՀՍՀԿ-ի գործունեությունը սահմանվում է հետևյալ չորս առանցքային դրույթներով.

#### Աջակցություն գիտական հետազոտությունների ոլորտում

- Խթանել ՀՀ Գիտությունների Ակադեմիայի, Երևանի Պետական Համալսարանի, ՀՀ բոլոր գիտահետազոտական ինստիտուտների գիտնականների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող հայ կամ հայկական գիտական կազմակերպությունների հետ համագործակցող օտարերկրյա գիտնականների կողմից տարվող գիտահետազոտական աշխատանքները,
- Նպաստել գիտության ասպարեզի, էկոլոգիայի կարևորության գիտակցության, ասոցիացիայի գործունեությանն առնչվող մասնագիտությունների զարգացմանը, որոնք հատկապես կարևորվում են Հայաստանի Հանրապետության համար,
- Նպաստել ՄՀՍՀԿ-ի անդամների մասնակցությանը գիտական և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին և նախագծերին՝ մասնավորապես Հայաստանում ֆրանսիական կամ եվրոպական կազմակերպությունների կազմակերպած ծրագրերին :

#### Ստորջրյա սուզումների գործնական զարգացում

- Նպաստել սպորտային և ստորջրյա գործունեության բնագավառում համապատասխան մասնագետների պատրաստմանը,
- Զարգացնել և խթանել ստորջրյա սուզումների գործունեությունը Հայաստանում,
- Զարգացնել և խթանել ստորջրյա սուզումները գործնականորեն որպես սիրողական սպորտ,
- Աջակցել ՄՀՍՀԿ-ի անդամների սպորտային և ստորջրյա գործունեությանը և նպաստել նրանց գիտելիքների ընդլայնմանը:

#### Գիտական հրապարակայնացում և հանրահռչակում

- Ասոցիացիայի անդամներին ներգրավել գիտական և կրթական ծրագրերին,
- Հրատարակել ասոցիացիայի անդամների աշխատությունները, վերլուծությունները, հետազոտությունները, նրանց գիտական և հասարակական աշխատանքների արդյունքները,
- Խթանել բնապահպանական գիտակցության զարգացումը՝ հանուն ռեսուրսների և հարստությունների ճիշտ օգտագործման՝ մասնավորապես Սևանա լճի համատեքստում:

Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՍՀԿ)

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742 Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն



**Ազգային և միջազգային համագործակցություն**

- Համագործակցել այլ հասարակական կազմակերպությունների հետ,
- Կապ հաստատել օտարերկրյա նմանատիպ ասոցիացիաների հետ և խթանել փորձի փոխանակումը,
- Նպաստել և զարգացնել ստորջրյա գործունեությունը օտար երկրներում:

**ՄՀՄՀԿ-ի անդամները.**

**Նախագահ`** Կլոդ Թուլումջյան, ՄՀՄՀԿ-ի (Ստորջրյա հետազոտությունների և սուզումների կենտրոն) հիմնադիր-նախագահ: ՄՀՄՀԿ-ն 1901թ. օրենքով հիմնադրված ֆրանսիական ընկերակցություն է, որը հիմք է հանդիսացել հինգ տարուց ի վեր իրականացվող հայաստանյան գիտարշավների համար` ի շահ հայ գիտնականների (Մարսել)

**Փոխնախագահ`** Արա Ավագյան, Մոնպելյեի Գիտությունների և Տեխնոլոգիայի Համալսարանի Երկրաբանական գիտությունների դոկտոր,, ՀՀ Գիտությունների Ակադեմիայի գիտնական (Երևան)

**Գանձապահ`** Ստեփան Կոջայան (Թուլուզ)

**Քարտուղար`** Լիլի Ավետիսյան (Փարիզ)

**Հաշվապահ`** Արայիկ Նավոյան` «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի Արտաքին կապերի, կրթական ծրագրերի համակարգման և որակի գծով պրոռեկտոր

**Հասարակայնության հետ կապեր`** Էլլինա Հովսեփյան, հաղորդակցության պատասխանատու

**Վերապատրաստման հանձնաժողով`** Գաբրիել Մելիքյան, FFESMM 3-րդ կարգի նախաձեռնող-վերապատրաստող` մասնագիտացված հնագիտական սուզումների և «Հաշմանդամների սուզման» գծով (Փարիզ)

**նյութատեխնիկական և Տեխնիկական հանձնաժողով`** Վահե Մելքոնյան, «Ծանր ոտք» սկաֆանդրով տեխնիկ Հայաստանի հիդրոէլեկտրական կենտրոններում և երկրի քաղաքացիական անվտանգությանը կից սուզորդ-փրկարար (Սևան):

**Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել`**

Էլլինա Հովսեփյան	– ellina_99@yahoo.fr
Արա Ավագյան	(+374) 093.13.19.80 – <a href="mailto:avagn1064@gmail.com">avagn1064@gmail.com</a>
Ստեփան Կոջայան	(+374) 098.42.39.58 – <a href="mailto:stephane.kojayan@hotmail.fr">stephane.kojayan@hotmail.fr</a>
Կլոդ Թուլումջյան	(+374) 077.105.109 – <a href="mailto:touloumdjian.cl@wanadoo.fr">touloumdjian.cl@wanadoo.fr</a>

**Ստորջրյա Հետազոտությունների և Սուզումների Հայկական Կենտրոն (ՄՀՄՀԿ)**

ՀՀ օրենքով 07/03/2012թ-ի պետական գրանցման թիվ 211.171.75452 – Կոդ 41628742 Ոչ առևտրային հասարակական կազմակերպություն

**Centre Arménien de Recherches et de Plongées Subaquatiques (CARPS)**

ONG non lucrative, de droit arménien, enregistrée le 07/03/2012 sous le n° 211.171.75452 – CODE 41628742